ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25 սեպտեմբերի 2019թ.

Նախագահ Կ.Հ. Հովսեփյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2019-20թթ. ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:

/զեկ. Կ.Հ.Հովսեփյան/

2. 2019-20թթ. ուս. տարվա I կիսամյակի I ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում:

/զեկ. Կ.Հ.Հովսեփյան/

3. Կրթական ծրագրերի վերանայում:

/զեկ. Կ.Հ.Հովսեփյան/

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Կ.Հ.Հովսեփյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Կ.Հ.Հովսեփյանը:

ԼՍԵՑԻՆ- ***2019-20թթ. ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:*** Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Կ.Հ.Հովսեփյանը:

Նա ներկայացրեց 2019-20 ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքները. Ըստ որի ,,Ինֆորմատիկա,, I և II կուրսերի վճարովի ուսուցման համակարգի պարտք ունեցող ուսանողները վերահանձնել են և ակադեմիական պարտք չի գրանցվել:

ԼՍԵՑԻՆ - 2019-20թթ. ուս. տարվա I կիսամյակի I ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Կ.Հ.Հովսեփյանը ներկայացրեց 2019-20 ուստարվա ընթացիկ քննությունների ստուգումների ժամանակացույցը, որը կամվել է ըստ դասացուցակի: Հաստատման մասին եղավ ընդհանուր առաջարկ:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն հաստատելու ընթացիկ քննությունների ստուգումների ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ -Կրթական ծրագրերի վերանայում

Օրակարգի երրորդ հարցի շուրջը Կ.Հ.Հովսեփյանը ներկայացրեց կրթական ծրագրերի կազմման և ներկայացման ամփոփ տվյալները. ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերը առկա են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Ս. Հովակիմյանը նշեց, որ անհրաժեշտ է որոշ փոփխություններ կատարել ուսումնական առարկանների ցանկում, ներառելով մոբայլ ծրագրավորման հետ կապված առարկաներ կամընտրական հիմունքներով: Անհրաժեշտ է նաև հստակեցնել միջառարկայական կապերը:

Գ.Ս.Սիմոնյանը ներկայացվածի մասին համակարծիք էր, ընդգծելով՝ կրթական ծրագրերի կիրառման նշանակությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – հանձնարարել «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնին կազմել մոբայլ ծրագրավորման դասընթացի առարկայական ծրագիրը և ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը:

ՆԱԽԱԳԱՀ Կ.Հ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ